# Մ Ե Կ Ն Ա Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2018 թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

### *1. Ապարատի պահպանման ծախսեր 7,063,686.40 հազ. ՀՀ դրամ*

***Աշխատավարձ և նրան հավասարեցված միջոցներ՝ 6,078,522.57 հազ. ՀՀ դրամ***

Աշխատավարձի և նրան հավասարեցված միջոցների հաշվարկը կատարվում է ելնելով «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ կետի «գ» ենթակետի պահանջներից, համաձայն որի ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցների աշխատավարձի միջինը պետք է համապատասխանի ՀՀ բանկային համակարգի միջին աշխատավարձին: 2018 թվականի համար առևտրային բանկերը կանխատեսել են **758 հազ ՀՀ դրամ** միջին աշխատավարձ: ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցների միջին աշխատավարձը 2018 թվականի համար պլանավորվել է **621.5 հազ**. ՀՀ դրամ՝ 2017 թվականի **603.5 հազ**. ՀՀ դրամի փոխարեն, ինչը պայմանավորված է կենտրոնական բանկում գործող վարձատրության կանոններով սահմանված բնականոն աճով:

2018թ համար հաշվարկները կատարվել են 815 աշխատատեղի համար՝ 2017 թվականի 820 աշխատակցի փոխարեն, արդյունքում աշխատավարձ և նրան հավասարեցված միջոցներ հոդվածը 2018 թվականի համար նախորդ տարվա նկատմամբ պլանավորվել է 2 տոկոսով ավել:

***Կենտրոնական բանկի սոցիալական ապահովության այլ ծախսեր՝ 422,500.0 հազ. ՀՀ դրամ:***

Գումարը նախատեսված է ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցների սոցիալական փաթեթի՝ այդ թվում առողջության ապահովագրության ծախսերը հոգալու համար:

*Այս հոդվածով նախատեսված գումարը 2017թ. նկատմամբ չի փոփոխվել:*

***Անձնակազմի գործուղում՝ 434,375.5 հազ. ՀՀ դրամ:***

Առաջնորդվելով ՀՀ կենտրոնական բանկի 2018-2020թթ ռազմավարությամբ սահմանված խնդիրների իրականացման անհրաժեշտությամբ և Կենտրոնական բանկի խնդիրների իրականացման գործընթացում յուրաքանչյուր աշխատակցի արդյունավետ գործունեությունն ապահովելու խնդրով՝ Կենտրոնական բանկը կարևորում է ֆինանսական ոլորտում կրթված մասնագետներ ունենալը, աշխատակիցների շարունակական ուսուցումն ու զարգացումը և մարտահրավերներին դիմակայելու պատրաստվածությունը: 2018թ ընթացքում Կենտրոնական բանկը նախատեսում է

կազմակերպել վերապատրաստման ծրագրեր (վերապատրաստման ծրագրերը կազմակերպվում են տարբեր թե ֆինանսական և թե ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից և դրանց որոշ մասը ենթադրում է որոշակի մասնակցության վճար), այդ թվում՝ ուսուցողական և փորձի փոխանակման այցեր, ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ արտասահմանում:

Այսպիսով, 2018թ-ին նախատեսվում է կազմակերպել թվով 125 վերապատրաստման ծրագիր (այդ թվում՝ ուսուցողական այցեր, ստանդարտ և նպատակային դասընթացներ), որոնց կմասնակցի մոտ 210 աշխատակից: Վերապատրաստման դասընթացները և փորձի փոխանակման նպատակով կազմակերպվելիք ուսուցողական այցերն ուղղված են լինելու հմտությունների զարգացմանը և հետևյալ թեմաներով գիտելիքների խորացմանը:

Դրանք են՝ գնաճի կանխատեսման մոդելներ, դրամավարկային քաղաքականության ծրագրերի մշակում և իրականացում, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կոորդինացում, DSGE մոդելներ, ֆինանսական կայունությունը նկարագրող ցուցանիշների հաշվարկ, նոր քեյնսյան մոդելների կառուցման միջոցով գնաճի դինամիկայի վրա աշխատանքի շուկայի կոշտությունների ազդեցություն, դոլարայնացման հիմնախնդիրներ, բանկերի վերահսկողության արդի խնդիրներ և առաջադեմ երկրների փորձ հաշվի առնելով ֆինանասական համակարգի կայունության խնդիրները, կոնսոլիդացված, մակրոպրուդենցիալ վերհսկողություն, համակարգային նշանակություն ունեցող հաստատությունների կարգավորման առանձնահատկություններ, Fintech և Blockchain համակարգերի վերաբերյալ իրավական և ինստիտուցիոնալ ասպեկտներ, գյուղատնտեսական ապահովագրություն, պարտադիր ապահովագրության վերահսկողություն, ֆինանսական ներգրավվածություն և ֆինանսական համակարգի զարգացում, պահուստների կառավարման նոր գործիքներ, ապահովագրական ոլորտի կարգավորում ու վերահսկողություն, սպառողների շահերի պաշտպանություն եւ ֆինանսական հասանելիություն, ՀՀ բանկային համակարգում կանխիկ դրամի վերաշրջանառության պայմանների ապահովում, հանրության հետ հաղորդակցման նոր PR գործիքների ուսումնասիրություն, փոփոխությունների կառավարում:

Բացի այդ, Կենտրոնական բանկն անդամակցելով որոշակի միջազգային կառույցների (Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ կոմիտե, ֆինանսական հետախուզության մարմինների Էգմոնտ խումբ, ԱՄՀ, ՀԲ, Ֆինանսական ներթափանցման այլանս, սպառողների պաշտպանության ցանց, Միջպետական բանկ, IORWG ) և լինելով ԱՊՀ-ի և ԵԱՏՀ-ի անդամ պետությունների արժութային, ապահովագրության և արժեթղթերի շուկայի կարգավորման պետական մարմինների խորհրդի անդամ, ուղղակի պարտավորություններ ունի ապահովել ներկայացուցչություն վերոնշյալ կազմակերպությունների կողմից կազմակերպվելիք համաժողովներին, տարեկան հանդիպումներին:

Անդրադառնալով գործուղման ծախսերի հաշվարկի մեթոդաբանությանը՝ հարկ է նշել, որ գործուղման ծախսերն իրականացվում են համաձայն ՀՀ ԿԲ-ում գործող կարգի և գործուղման նորմերի: Ինչպես և նախորդ տարի, 2018թ. ևս այս հոդվածում նախատեսված միջոցների պլանավորման հաշվարկի հիմքում ընկած է հետևյալ տրամաբանությունը՝ վերապատրաստման դասընթացների միջին տևողությունը 5 օր է, որի դեպքում աշխատակիցը, գործող կարգի շրջանակներում, մեկնում է դասընթացը սկսելուց մեկ օր առաջ և վերադառնում դասընթացի ավարտին հաջորդող օրը՝ ստանալով համապատասխան օրերի կացության վճարը և ճանապարհածախսը:

Վերոգրյալ և այլ չնախատեսված գործուղումների կազմակերպման նպատակով ՀՀ կենտրոնական բանկի ծախսերի նախահաշվում արտաքին վերապատրաստումների համար պլանավորվել է 373,440.0հազ դրամ:

2018թ. ընթացքում ՀՀ տարածքում ուսուցման և վերապատրաստման ծախսերի համար պլանավորվել է 60,935.5 հազ. դրամ:

Կենտրոնական բանկում շարունակում է գործել միջազգային մասնագիտական որակավորման հավաստագրերի ստացման և գիտելիքի շարունակական փոխանցման պահանջը, որը ենթադրում է աշխատակիցների կողմից համապատասխան դասընթացների մասնակցություն, քննությունների հանձնում, իսկ որակավորում ունեցող աշխատակիցների դեպքում՝ դրանք պահպանելու նպատակով մասնակցություն որոշակի վերապատրաստման դասընթացների:

1. Պլանավորված ծախսերի մյուս մասը պայմանավորված է Սյունիքի, Գորիսի ՏԳԿ-ներ ԿԲ աշխատակիցների գործուղումներով, ինչպես նաև Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում միջազգային հեղինակավոր կառույցների հետ համագործակցության շրջանակում իրականացվող տարբեր տարածաշրջանային կոնֆերանսներին և միջազգային սեմինարներին Կենտրոնական բանկի աշխատակիցների մասնակցությամբ:

2 Կարևորելով երիտասարդ մասնագետների զարգացումը, ինչպես նաև աշխատանքային խնդիրներն արդյունավետ իրականացնելու համար պահանջվող հիմնարար հմտությունների, օտար լեզուների իմացության կատարելագործման անհրաժեշտությունը՝ կենտրոնական բանկը որոշակի ծախսեր է պլանավորել նաև այս նպատակով՝ ՀՀ տարածքում առկա ուսումնական հաստատություններում և տեղի մասնագետների ներգրավմամբ ուսուցման և վերապատրաստման ծրագրերին ԿԲ աշխատակիցների մասնակցությունն ապահովելու նկատառումով:

*Այս հոդվածով նախատեսված գումարը 2017թ. նկատմամբ գրեթե չի փոփոխվել:*

## ***Ներկայացուցչական ծախսեր՝ 54,218.3 հազ. ՀՀ դրամ***

Նախատեսվում են մի շարք միջազգային պատվիրակությունների ընդունելություններ, օտարերկրյա բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչների այցեր՝

համատեղ ծրագրեր իրականացնելու վերաբերյալ քննարկումների և բանակցությունների նպատակով:

*Այս հոդվածով նախատեսված գումարը 2017թ. նկատմամբ չի փոփոխվել:*

***Ծառայողական փոխադրամիջոցների շահագործում՝ 74,070.0 հազ. ՀՀ դրամ***

2018թ.-ին ՀՀ ԿԲ-ում կշահագործվի 32 ավտոմեքենա: Հաշվարկները կատարվել են հիմք ընդունելով վառելիքի շուկայական գները և 2017թ. ՀՀ ԿԲ կողմից վառելիքի ձեռք բերման և ավտոմեքենաների տեխսպասարկման համար կնքված պայմանագրերը:

- **Ծառայողական փոխադրամիջոցների սպասարկում 27,648,0 հազ ՀՀ դրամ**

Հաշվի առնելով 2016թ. և 2017թ. I կիսամյակում ավտոմեքենաների սպասարկման համար կատարված ծախսերը, 2018թ. ծառայողական փոխադրամիջոցների սպասարկման համար նախատեսվող գումարը մեկ ավտոմեքենայի համար նախատեսվել է ամսական 72,000 ՀՀ դրամ, որի տարեկան ամբողջական գումարը կկազմի ***27,648.0 հազ. դրամ***

*32 ավտոմեքենա x 72,000 հազ x12 ամիս =27,648.0 հազ. ՀՀ դրամ*

- **Վառելանյութ 44,422.0 *հազ ՀՀ դրամ***

Հիմք ընդունելով վառելիքի ընթացիկ գները և տարվա ընթացքում գների տատանումները, 2018թ վառելանյութի՝ բենզինի, 1 լիտրի համար կանխատեսվել է 380.0 ՀՀ դրամ, իսկ դիզ. վառելիքի 1 լիտրի գինը՝ 330.0 ՀՀ դրամ:

ՀՀ ԿԲ շահագործվող թվով 32 ավտոմեքենաներից *բենզինով են աշխատում թվով* 25-ը:

ՀՀ կենտրոնական բանկի ներքին կարգերի համաձայն ՀՀ կենտրոնական բանկում նախատեսվում է սպառել մոտ ***83,760լ բենզին***, որի գինը ***380 դրամով*** հաշվելու դեպքում կենտրոնական բանկի բենզինի տարեկան ծախսը 2018թ կկազմի ***31,828.8 հազ ՀՀ դրամ:***

*Դիզելային վառելիքը,* ՀՀ կենտրոնական բանկի ներքին կարգերի համաձայն, տարեկան ծախսվում է մոտ ***29,640լ դիզ. վառելիք***, որի գինը ***330 դրամով*** հաշվելու դեպքում կենտրոնական բանկի դիզ.վառելիքի տարեկան ծախսը կկազմի՝ **9,781.2 ՀՀ հազ դրամ:**

*Նավթամթերք Քսայուղեր* ձեռք բերելու համար 2018թ. նախատեսվում է ***2,812.0 ՀՀ հազ դրամ:***

- **Այլ տրանսպորտային ծախսեր *2,000.0 ՀՀ հազ դրամ***

Այս գումարը նախատեսվում է ավտոմեքենաների տեխնիկական զննման, ՊետԱվտոՏեսչության հետ կապված և այլ հնարավոր ծախսերի իրականացման նպատակով:

*Այս հոդվածով նախատեսված գումարը 2017թ. նկատմամբ չի փոխվել:*

## 2. Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսեր՝ 61,227.7 հազ. ՀՀ դրամ

Հաշվի առնելով **տեղական մամուլում** հայտարարությունների ծավալը և հաճախականության աճի հնարավորությունը, հայտարարությունների հրապարակման համար նախատեսվում է **7,000.0 հազ դրամ:**

ԿԲ հաշվեկշիռները, արտաքին պահուստների մասին տեղեկատվությունը, թափուր աշխատատեղերի և ձեռքբերման մրցույթների մասին հայտարարությունները տպագրվելու են «Ազգ», «Հայաստանի Հանրապետություն», «Հայոց Աշխարհ», «Առավոտ», «Գոլոս Արմենիա» թերթերում:

25,000(1 հայտարարության արժեք)X280(հայտարարությունների քանակ)=7,000.0 հազ ՀՀ դրամ:

ՀՀ Կենտրոնական բանկի և Հայաստանի բանկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության արտասահմանյան հրատարակություններում տեղադրելու նպատակով, նախատեսվում է **500.0** հազ ՀՀ դրամ:

*Ընդհանուր գումարը 2017թ. նկատմամբ մնացել է անփոփոխ:*

***Գրականության ձեռքբերման*** համար պլանավորվել է **10,027.7 հազ ՀՀ դրամ**

*Այս հոդվածի հետ կապված ծախսերը 2017թ նկատմամբ մնացել են գրեթե անփոփոխ:*

***Ամսագրերի և թերթերի բաժանորդագրության*** համար պլանավորվել է **10,500.0 հազ ՀՀ դրամ:** Գումարը նախատեսվում է Հայաստանի Հանրապետության տնտեսական, ներքաղաքական, ինչպես նաև միջազգային նորություններին իրազեկ լինելու նպատակով անհրաժեշտ, Հայաստանում հրատարակվող՝ տնտեսական և տարբեր քաղաքական ուղղվածություն ունեցող, մի շարք թերթերի, ինչպես նաև ֆինանսաբանկային տեղեկատվություն պարունակող ռուսական, բրիտանական, ամերիկյան, հայաստանյան պարբերականների բաժանորդագրության համար: 2018 թ. շարունակվելու են մի շարք արտասահմանյան մասնագիտական ամսագրերի բաժանորդագրությունները, ինչպես նաև բաժանորդագրվելու ենք մի քանի նոր ամսագրերի:

***Լրատվական գործակալությունների նյութերի ձեռք բերման*** համար պլանավորվել է **6,500.0 հազ ՀՀ** դրամ: Ծախսերը պլանավորվել են հաշվի առնելով կենտրոնական բանկի կողմից 2018թ ձեռքբերման ենթակա լրատվական գործակալությունների նյութերի ցանկը և 2017թ. գործող պայմանագրային գները:

*Նախատեսված գումարը 2017թ. նկատմամբ չի փոփոխվել:*

***Ֆիլմի և տեսահոլովակի նկարահանման ծախսերը*** պլանավորվել են տարբեր բացատրական և գովազդային տեսահոլովակների նկարահանման և հեռարձակման համար, որոնց ծախսերը կկազմեն **10,000.0 հազ**. դրամ՝ որից 3 մլն դրամ նախատեսվում է ռադիոգովազդների և հեռուստագովազդների պատրաստման, և 7 մլն դրամ՝ ռադիոգովազդների և հեռուստագովազդների հեռարձակման համար: Նախատեսվում են բացատրական տեսանյութերի պատրաստում ֆինանսական ծառայությունների սպառողների շահերի պաշտպանության, անկանխիկ վճարումների զարգացման խթանման և այլ թեմաներով:

*Նախատեսված գումարը 2017թ նկատմամբ չի փոփոխվել:*

***Հասարակայնության հետ կապերի գծով ծախսերը պլանավորվել են 16,700 հազ ՀՀ դրամ***:

2018 թ. ընթացքում ԿԲ վերաբերյալ ԶԼՄ-ների անդրադարձերի և ազդակների ամբողջական պատկեր ստանալու նպատակով նախատեսվել է մոնիտորինգային ծրագրի գործարկում, որը կապահովի ԿԲ մասին բոլոր տեսակի ԶԼՄ-ների անդրադարձերի մասին տեղեկատվություն: Ծրագրից օգտվելու ամսական ծախսը կազմում է 540.000 դրամ (տարեկան **6.480.0** հազ դրամ): ԿԲ վերաբերյալ հրապարակվանդրադարձնեիրող տարբեր վիճակագրական տվյալներ, թվային տեղեկություններ առավել պարզ ու տեսողական տեսանկյունից ընկալելի ներկայացնելու համար նախատեսվում է կիրառել ինֆոգրաֆիկա, որի ձևավորման աշխատանքներն իրականացնող համապատասխան մասնագետի ծառայությունների արժեքը կազմում է ոչ ավել, քան ամսական մոտ 293.000 դրամ (մոտ տարեկան **3.520.0** հազ դրամ):

ԿԲ գործառույթները ներկայացնող ցուցահանդեսների կազմակերպման, մարզերից Կենտրոնական բանկ դպրոցականների այցելությունների կազմակերպման, ՀՀ և արտասահմանյան ԲՈՒՀ-երի ուսանողների պրակտիկայի, Ի.Իսահակյանի անվան կրթաթոշակի մրցույթի գործընթացների կազմակերպման, կարիերայի տոնավաճառներին մասնակցության նպատակով 2018 թ համար նախատեսվել է **6,700** հազ.ՀՀ դրամ: Այս հոդվածով պլանավորվում է նաև գումար տնտեսագիտություն դասավանդող հանրակրթական ավագ և միջին դպրոցների ուսուցիչների համար Կենտրոնական բանկի գործառույթների, մակրո և միկրո տնտեսագիտության, Հայաստանի տնտեսության վերաբերյալ դասընթացների անցկացման կրթական ծրագիրը շարունակելու համար (երկշաբաթյա դասընթացներ Այցելուների կենտրոնում):

*Այս հոդվածով նախատեսված գումարը 2017թ նկատմամբ չի փոփոխվել:*

## *3 Տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված ծախսեր՝ 113,848.7 հազ. ՀՀ դրամ*

2018թ. կենտրոնական բանկի ծառայողների համար աշխատանքի նորմալ պայմաններ ապահովելու նպատակով արագամաշ առարկաների սպառման հետ կապված ծախսերը կկազմեն 113,848.7 հազ. դրամ: Տնտեսական ծախսերը հիմնականում ներառում են կենտրոնական բանկի շենքերի սպասարկման հետ կապված անհրաժեշտ ծախսերը: Պլանավորումը կատարվել է հիմք ընդունելով 2016 թվականի ու 2017թ. առաջին կիսամյակի ընթացքում, օգտագործված տնտեսական նյութերի սպառման ծավալն ու 2018 թ. համապատասխան ապրանքների սպասվելիք գները:

*Այս հոդվածով նախատեսված գումարը 2017թ. նկատմամբ նվազել է 0.5 % ով:*

## *4. Ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսեր՝ 35,965.74 հազ. ՀՀ դրամ*

Կենտրոնական բանկի հեռախոսային և ֆաքսիմիլային կապի անխափան աշխատանքն իրականացնում են «Արմենթել» ՀՁՓԲԸ (Երևանի քաղաքային հեռախոսակապի ծառայություն, բջջային հեռախոսակապի ծառայություն (Բիլայն և Վիվասել՝ Ղ. Տելեկոմ ՓԲԸ՝ Arminco, Ucom), Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Սյունիքի և Տավուշի մարզերի տարածքային հեռախոսային կապի ծառայություն), որոնց հետ կնքված են համապատասխան պայմանագրեր և մատուցվող ծառայությունները որոշվում են ըստ սահմանված գնացուցակների: Հաշվարկներում ներառվել են աբոնենտային վարձը, խոսակցությունների վճարները, նոր հեռախոսահամարների միացումը, սակագների հնարավոր փոփոխությունը, ռոպեավարձի կիրառումը:

- Քաղաքային հեռախոսակապ՝ ***25,796.94 հազ. ՀՀ դրամ***

Կենտրոնական բանկի վարչական շենքում և ք.Դիլիջանում ՀՀ կենտրոնական բանկին պատկանող տարածքներում առկա է 125 քաղաքային հեռախոսագիծ

ա) Բաժանորդային վճար՝ **5,985.6 հազ** ՀՀ դրամ

*Արմենթել՝ 81 հ/գիծ. x 4,800 դր. x 12 ամիս = **4,665,6 հազ ՀՀ դրամ***

*Ucom՝ 44հ/գիծ. x 2,500 դր. x 12 ամիս = **1,320.0 հազ ՀՀ դրամ***

բ) Միջքաղաքային խոսակցությունների վճար՝ **5,694.0 հազ.** ՀՀ դրամ

Հաշվի առնելով նախորդ տարիների միջքաղաքային խոսակցությունների վճարները՝ 1 ամսվա կտրվածքով 1 հեռախոսի միջին ամսական ծախսը (վճարովի րոպեներ)

*81 $_{հ/գիծ}$ x 4,500 դր. x 12 ամիս = **4,374.0 հազ ՀՀ դրամ***

*44 $_{հ/գիծ}$ x 2,500 դր. x 12 ամիս = **1,320.0 հազ ՀՀ դրամ***

գ) Ներքաղաքային խոսակցություններ՝ **7,128.54 *հազ.*** ՀՀ դրամ

**Հաշվի առնելով ռոպեավարձի կիրառումը** օրական միջինը 1 հեռ.՝ 45 րոպե

*68հեռ.x 5 դր x 307 օր x 45րոպե = **4,697.1 հազ ՀՀ դրամ***

*44հեռ. x 4 դր x 307 օր x 45 րոպե= **2,431.44 հազ ՀՀ դրամ***

դ) Ուղիղ կապ՝***388.8 հազ*** ՀՀ դրամ

Կենտրոնական բանկում ուղիղ կապով շահագործվում է 9 հեռախոսակապ

*9$_{հեռ.}$ X3,600 $_{դրամ}$ x 12 $_{ամիս}$ = **388.8 հազ** ՀՀ դրամ:*

ե) E1 հոսք՝ ***6,600.0 հազ*** ՀՀ դրամ

*400,000$_{դր}$x12 $_{ամիս}$* = **4,800.0** հազ ՀՀ դրամ

*150,000$_{դր}$x12 $_{ամիս}$* = **1,800.0** հազ ՀՀ դրամ

- ***«Վան» հանգստյան տուն՝ 355.2 հազ ՀՀ դրամ***

ա) աբոնենտային վճար 2 $_{հեռ.}$ x 4,800 $_{դրամ}$ x 12$_{ամիս}$ =115.2 հազ ՀՀ դրամ

բ) միջքաղաքային խոսակցությունների վճար 1 $_{հեռ.}$ x 20.000 $_{դրամ}$ x12 $_{ամիս}$ = 240.0հազ ՀՀ դրամ

- **ՀՀ և ԱԱ նախարարություն և ROSSA՝ *1,200.0 հազ ՀՀ դրամ***

2017թ կենտրոնական բանկում գործելու է 3 կառավարական հեռախոսակապ՝

*3 x 33,333$_{դր.}$ x 12 $_{ամիս}$ = 1,200.0 **ՀՀ դրամ***

- **Բջջային հեռախոսակապ *6,408.0 հազ ՀՀ դրամ***

ՀՀ կենտրոնական բանկում առկա են թվով 39 բջջային հեռախոսներ: Հաշվի առնելով 2016թ. և 2017թ. I կիսամյակի փաստացի վճարները ու գործող պայմանագրերը նախատեսվում է՝

*1 x 30,000 $_{դր.}$ x 12 $_{ամիս}$ = 360.0 հազ ՀՀ դրամ*

*6 x 20,000 $_{դր.}$ x 12 $_{ամիս}$ = 1,440.0 հազ ՀՀ դրամ*

*32x12,000դր.x12ամիս = 4,608.0 հազ ՀՀ դրամ*

- **Ծաղկաձորի ՈՒԿ՝ 756.0 հազ ՀՀ դրամ**

*ա) բաժանորդային վճար՝ 10 x 4,800 բաժանորդային վարձ x 12 = 576.0 հազ ՀՀ դրամ*

*բ) միջքաղաքային՝ 5 x3,000 x 12= 180.0 հազ ՀՀ դրամ*

- **Սյունիքի ՏԴԿ՝ 849.6 հազՀՀ դրամ**

*ա) բաժանորդային վճար՝ 6 x 4,800 բաժանորդային վարձ x 12 ամիս = 345.6 հազ ՀՀ դրամ*

*բ) միջքաղաքային՝ 6 x 7,000 դր x 12 ամիս = 504.0 հազ ՀՀ դրամ*

- **Սիսիանի ՏԴԿ՝ մոտ 600.0 հազ ՀՀ դրամ՝**

*ա) բաժանորդային վճար՝ 5 հեռ. x 4,800 դրամ x 12 ամիս = 288.0 հազ ՀՀ դրամ*

*բ) միջքաղաքային՝ 5 x 3,000 x 12= 180.0 հազ ՀՀ դրամ*

*գ) ուղիղ գծի բաժանորդային վարձ 3հեռ. x 3.600 դրամ x 12 ամիս = 129.6 հազ ՀՀ դրամ*

*Ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսերը 2017թ նկատմամբ նվազել են 7.5% ով:*

## *5. Չնախատեսված ծախսեր՝ 20,000.0 հազ. ՀՀ դրամ*

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ծախսերում ներառված է «Չնախատեսված ծախսեր» հոդվածը: Այս ծախսային հոդվածը նախատեսված է ՀՀ օրենքների և գործող տարբեր բնույթի սակագների փոփոխությամբ պայմանավորված ծախսերի իրականացման, ինչպես նաև այլ չնախատեսված վարչական ծախսերի կատարման համար:

*Այս հոդվածով նախատեսված գումարը 2017թ նկատմամբ չի փոփոխվել:*

***Ընդամենը վարչական ծախսեր՝ 7,294,728.5 հազ. ՀՀ դրամ:***

## ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

### *1. Աշխատանքային շենքերի և շինությունների կառուցում, ձեռքբերում և կապիտալ վերանորոգում՝ 300,000.0 հազ ՀՀ դրամ*

Այս հոդվածով պլանավորված գումարը նախատեսվում է օգտագործել ծառայությունների ընդլայնման նպատակով Դիլիջան քաղաքում գտնվող «Գիտելիք հանուն զարգացման կենտրոնի» վերակառուցման համար:

Դիլիջանի և հարակից համայնքների շրջանում հարցումները, տեղական և միջազգային գործընկերների կողմից ձևավորել է պահանջ «Գիտելիք հանուն զարգացման կենտրոնում» կազմակերպված բազմաթիվ ուսումնական ծրագրերը հասանելի դարձնել ոչ միայն Դիլիջանի, այլև հարակից քաղաքների ու գյուղերի բնակիչներին ու երեխաներին: Հաշվի առնելով վերը նշվածը և Կենտրոնի ներկայիս արդեն իսկ խիստ ծանրաբեռնվածությունը, նախատեսվում է վերակառուցել «Գիտելիք հանուն զարգացման կենտրոնը»՝ տարբեր ծրագրերին մասնակիցների քանակը 550-ից հասցնելով 1500-ի:

Աշխատանքային շենքի կապիտալ վերանորոգման հետ կապված ներդրումները իրականացվելու են փորձագիտական դրական եզրակացություն ունեցող նախագծահաշվային փաստաթղթերի հիման վրա, որոնց հիման վրա էլ ստացվում է շինարարական թույլտվությունը:

Կապիտալ ներդրումները ենթարկվում են նաև ստուգման՝ միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպություններին կողմից:

*Աշխատանքային շենքերի և շինությունների կառուցում, ձեռքբերում և կապիտալ վերանորոգում՝ հոդվածով նախատեսված գումարը 2017թ. նկատմամբ* նվազել է 86 % *ով:*

### *2. Համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, կապի միջոցների և բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցների ձեռքբերում և կապիտալ վերանորոգում՝ 2,158,500.0 հազ. ՀՀ դրամ*

#### *2.1 Համակարգչային տեխնիկա՝ 1,987,846.0 հազ. ՀՀ դրամ:*

Համակարգչային տեխնիկայի ձեռքբերման ծրագիրը ընդգրկում է համակարգիչների, հարակից սարքավորումների, ծրագրային ապահովման, կապի սարքավորումների ձեռքբերում 2018 թվականի ընթացքում և հիմնված է սկզբունքների վրա, որոնք

սահմանված են ՀՀ կենտրոնական բանկի տեղեկատվական տեխնոլոգիաների քաղաքականությամբ, տեղեկատվական անվտանգության քաղաքականությամբ և հավանության է արժանացել ՀՀ կենտրոնական բանկի Խորհրդի կողմից, բխում են միջազգային փորձից և բանկային համակարգի զարգացման միտումներից:

ա) ՀՀ կենտրոնական բանկի բոլոր ֆունկցիոնալ աշխատակիցները պետք է ունենան իրենց համակարգիչները: Այս խնդիրը ՀՀ ԿԲ-ում գործնականորեն լուծված է: Աշխատակայանների քանակի ավելացումը կարող է կատարվել կառուցվածքային փոփոխությունների հետևանքով, եթե ավելանա աշխատակիցների քանակը, կամ եթե որոշակի կիրառական ֆունկցիաների իրականացման համար պահանջվեն լրացուցիչ համակարգիչներ, որոնք կկատարեն հատուկ ֆունկցիոնալ խնդիրներ: Ընդ որում, օգտագործվող համակարգիչները՝ ինչպես սերվերները, այնպես էլ աշխատանքային կայանները, ըստ անհրաժեշտության պետք է թարմացվեն: Համակարգիչների բարոյական և ֆիզիկական հնացումը (մաշվածքը) տեղի է ունենում 3-5 տարիների ընթացքում՝ կախված օգտագործման ոլորտից. այդ պատճառով ՀՀ ԿԲ համակարգիչները, որպես կանոն, փոխարինվում են 5 տարին մեկ՝ հին համակարգիչները օտարվում են և դրանց փոխարեն ձեռք են բերվում նորերը:

բ) ՀՀ կենտրոնական բանկի ավտոմատացված բանկային համակարգերի անխափան, հուսալի և անվտանգ աշխատանքը ապահովելու համար բոլոր համակարգիչները պետք է ապահովված լինեն անխափան էլեկտրասնուցման սարքերով: ՀՀ կենտրոնական բանկի համակարգիչները գործնականորեն համալրված են անխափան սնուցման սարքերով և այդ պատճառով նորերի ձեռք բերումը պայմանավորվում է հիմնականում նոր սերվերների և աշխատակայանների ձեռք բերումով կամ ֆիզիկապես և բարոյապես մաշվածների փոխարինմամբ:

գ) ՀՀ կենտրոնական բանկում տպող սարքերը պետք է օգտագործվեն օպտիմալ ձևով, այսինքն՝ մինիմալ քանակությամբ ապահովեն մաքսիմալ արտադրողականություն և բարձր որակ: Դա ապահովվում է ցանցային լազերային տպող սարքերի օգտագործմամբ: Նախորդ տարիներին տվյալ սկզբունքի կիրառումը բերեց տպող սարքերի ընդհանուր քանակի էական նվազման:

դ) ՀՀ կենտրոնական բանկում օգտագործվող ստանդարտ ծրագրային համակարգերը և փաթեթները պետք է անընդհատ թարմացվեն նոր տարբերակներով՝ աշխարհում կիրառվող նոր տեղեկատվական տեխնոլոգիաներին համապատասխան: Հակառակ դեպքում ՀՀ ԿԲ-ը շատ արագ հետ կմնա տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումներից և հնարավոր չի լինի ներդնել և շահագործել նոր կիրառական ծրագրային համակարգեր, որոնք իրականացնում են ժամանակակից ֆինանսական և բանկային տեխնոլոգիաներ, ինչպես նաև արդյունավետ մշակել և պահպանել անընդհատ աճող ֆինանսական և տնտեսական տեղեկատվության ծավալները:

ե) ՀՀ կենտրոնական բանկի լոկալ համակարգչային ցանցը, միջբանկային համակարգչային ցանցը, էլեկտրոնային կապի և վճարումների այլ համակարգերը անընդհատ պետք է զարգանան հուսալիության և անվտանգության բարձրացման, արտադրողականության ավելացման, ժամանակակից տեխնիկական և ծրագրային միջոցների կիրառման ուղղություններով:

զ) ՀՀ կենտրոնական բանկում նոր կիրառական և ենթակառուցվածքի կառավարման ծրագրային նոր համակարգերի մշակման և թեստավորման գործընթացները պետք է ամբողջովին տարանջատված լինեն իրական համակարգերի շահագործման գործընթացներից: Այդ իրականացնելու համար ԿԲ-ում ստեղծված է ու ըստ պահանջարկի պետք է զարգացվի տրամաբանորեն առանձին թեստային լոկալ ցանց՝ իր համակարգիչներով և սերվերներով, որոնք օգտագործվում են ծրագրավորողների և թեստավորողների կողմից նոր համակարգերի թեստավորման և մշակման աշխատանքներ կատարելու ժամանակ: Սա համապատասխանում է միջազգային ստանդարտներին և լավագույն փորձին:

է) ՀՀ կենտրոնական բանկում հիմնականում կիրառվում են սերվերներ, որոնք ընդգրկված են Բլեյդ սերվերային համալիրներում, ու տվյալների պահպանման ինքնուրույն համակարգեր, որոնք միավորվում են կապի հատուկ ենթակառուցվածքով Բլեյդ համալիրների հետ ու տրամադրում են սերվերներին արտաքին հիշողության մեծ տիրույթներ: Ինչպես սերվերների, այնպես էլ արտաքին հիշողության համար կիրառվում է վիրտուալացում: Այս մոտեցումները թույլ են տալիս արդյունավետ օգտագործել ֆիզիկական սերվերների ու հիշողության սարքերի ռեսուրսները, ապահովել նրանց աշխատանքի բարձր հուսալիություն ու անընդհատություն:

ը) Կենտրոնական բանկում ինտերնետային ցանցը և լոկալ ցանցը միավորվում են մեկ միացյալ ցանցի կազմում: Միացյալ ցանցում կիրառվում են համապատասխան պաշտպանական ծրագրա-ապարատային միջոցներ, տեխնոլոգիական լուծումներ, ցանցային պաշտպանական համակարգեր և արձանագրություններ, կազմակերպչական միջոցառումներ, որոնք ապահովում են տեղեկատվական և հաշվողական ռեսուրսների պաշտպանությունը անթույլատրելի տիրապետումից, փոփոխումից և ոչնչացումից: Միացյալ ցանցը բաժանված է տարբեր պաշտպանական գոտիների: Ցանցի ինչպես օգտագործողները, այնպես էլ սերվերները և տեղեկատվական ռեսուրսները տրամաբանորեն բաժանված են տարբեր խմբերի՝ կախված նրանց գաղտնիության և աշխատանքի անընդհատության ապահովման կարևորությունից: Տարբեր խմբերը միավորվում են տարբեր վիրտուալ ցանցերում և կարող են փոխգործակցել միմյանց հետ միայն հատուկ պաշտպանական ապարատածրագրային համակարգերի միջնորդությամբ՝ ըստ սահմանված կանոնների: Նշված չափանիշներից ելնելով որոշ աշխատակայաններ կարող են օգտագործվել միայն ներքին կրիտիկական կիրառական համակարգերից օգտվելու համար, որոշ աշխատակայաններ՝ և ներքին ոչ կրիտիկական կիրառական համակարգերից, և ինտերնետից օգտվելու համար, իսկ որոշները՝ միայն ինտերնետից օգտվելու համար: Բացի այդ ինտերնետից օգտվող համակարգիչներից

աշխատակիցները օգտվում են նաև արտաքին էլեկտրոնային փոստի ծառայություններից: Կրիտիկական սերվերները և տեղեկատվական ռեսուրսները պաշտպանվում են ոչ միայն արտաքին անթույլատրելի օգտագործումներից, այլ նաև ներքին օգտագործողների անթույլատրելի օգտագործումներից:

Համաձայն տվյալ սկզբունքների, ՀՀ կենտրոնական բանկի ավտոմատացման ռազմավարության ու տեղեկատվական տեխնոլոգիաների քաղաքականության, ՀՀ կենտրոնական բանկի ավտոմատացման ներկա վիճակի և զարգացման պլանների, կազմված է 2018 թվականի համակարգչային տեխնիկայի և ծրագրային համակարգերի ձեռքբերման ծրագիրը: 2018 թվականի կապիտալ ներդրումների ծրագիրը ընդգրկում է համակարգչային տեխնիկայի ու ծրագրային ապահովման ձեռք բերումներ ԿԲ Երևանի մասնաշենքի ու Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի համար:

ՀՀ կենտրոնական բանկում, որպես կանոն, ձեռք է բերվում բարձրորակ այսպես կոչված "Brand Name" կարգի համակարգչային տեխնիկա միայն մրցութային հիմունքներով: Համակարգչային տեխնիկան, որպես կանոն DELL, Hewlett Packard, IBM, Cisco Systems, Juniper, Huawei և այլ հանրահայտ ընկերությունների արտադրանք է: Փորձը ցույց է տալիս, որ նշված տեսակի տեխնիկան ունի բարձր որակ, լավ և երկարաժամկետ (3 տարի) երաշխիքային սպասարկում, բարձր հուսալիություն և տեխնիկական զարգացման լայն հնարավորություններ: Հաշվի առնելով բանկային ավտոմատացված համակարգերին ներկայացվող տեխնիկական ռիսկերի նվազեցման, հուսալիության, անխափան աշխատանքի և անվտանգության բարձր պահանջները, նման բարձրորակ տեխնիկայի օգտագործումը ՀՀ կենտրոնական բանկում անհրաժեշտություն է: Կապիտալ ներդրումների հաշվարկը հիմնված է նշված համակարգչային տեխնիկայի ստանդարտ գների վրա, որոնք մոտավորապես 25% ավելի թանկ են ոչ "Brand Name" համակարգչային տեխնիկայից: Ձեռքբերման մրցութային եղանակը թույլ է տալիս ձեռք բերել տեխնիկան հայկական շուկայում առկա մինիմալ գներով: Կենտրոնական բանկի կապիտալ ներդրումների ծրագրով 2018թ. նախատեսվում են ներքոնշված ձեռքբերումները:

Ընդհանուր համակարգչային տեխնիկայի գծով ծախսերը նախորդ տարվա համեմատ գրեթե չեն փոխվել:

- **Համակարգչային տեխնիկայի և հարակից սարքավորումների գծով կապիտալ ներդրումները պլանավորվել են՝ 348,632.0 հազ դրամ,**

**Համակարգչային տեխնիկայի և հարակից սարքավորումների մեջ են մտնում՝**

- ➢ **Համակարգիչներ՝ 118,580.0 հազ դրամ:**

2018 թ. նախատեսվում է ձեռք բերել 242 նոր համակարգիչ, որոնք կփոխարինեն հինգ տարուց ավել շահագործված համակարգիչները:

➢ **Սերվերներ՝ 21,500.0 հազ դրամ**

2018թ. նախատեսվում է ձեռք բերել 5 հատ սերվեր SWIFT համակարգի հիմնական ու պահուստային սերվերները փոխարինելու համար: Անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ ԿԲ SWIFT տերմինալի գործող SWIFT Allince Entry ծրագրային փաթեթը փոխարինելու հանգամանքով, ինչը SWIFT-ի պարտադիր կատարման նախաձեռնությունն է ու պահանջում է ավելի հզոր սերվերներ, քան գործող սերվերները:

➢ **500 VA անխափան սնուցման սարք՝ 1,029.0 հազ դրամ:**

2018թ. ՀՀ կենտրոնական բանկի աշխատատեղերում օգտագործվող համակարգիչների անխափան սնուցման հնացած սարքերը փոխարինելու համար նախատեսվում է ձեռք բերել 21 անխափան սնուցման սարք:

➢ **Հզոր անխափան սնուցման սարքեր՝ 40,000.0 հազ դրամ:**

2018թ. ՀՀ կենտրոնական բանկի Երևանի մասնաշենքի սերվերային ենթակառուցվածքի էլեկտրասնուցման համակարգի 30-ից 60KW հզորությամբ անխափան սնուցման սարգերը հնացել են, աճել են դրանց տարեկան վերանորոգման ծախսերը և խափանվելու հավանականությունը (2017 թվականներին տեղի է ունեցել նման միջադեպ): Ուստի 2018 թվականին նախատեսվում է փոխարինել այդ սարքավորումներից 2-ը նորերով:

➢ **Notebook տիպի համակարգիչները՝ 23,400.0 հազ դրամ:**

Կենտրոնական բանկի ստորաբաժանումներում և պահուստային բանկում հինգ տարուց ավել շահագործվող Notebook տիպի համակարգիչները փոխարինելու նպատակով նախատեսվել է 2018թ. ձեռք բերել 36 Notebook տիպի համակարգիչ:

➢ **Այլ համակարգչային սարքավորումներ՝ 29,743.5 հազ դրամ:**

2018թ. նախատեսվում է ձեռք բերել՝ 6 հատ դարակային պահարաններ կոմուտացիոն պանելների ու ցանցային սարքավորումների տեղակայման համար (ծախսերը կկազմեն 16,800.0 հազ դրամ), 4 հատ տեղեկատվության պահպանման հատուկ համակարգ NAS՝ 6,000.0 հազ դրամ ընդհանուր արժեքով, մեկ հատ պիտակավորման սարք և հաշվարման ու գույքագրման RFID տեխնոլոգիայով համակարգի բաղադրիչներ 6,943.5 հազ դրամ ընդհանուր արժեքով:

➢ **Տպող սարքավորումներ՝ 3,380.0 հազ ՀՀ դրամ**

2018թ. ՀՀ կենտրոնական բանկի ստորաբաժանումներում հին բարոյապես ու ֆիզիկապես մաշված տպող սարքերը փոխարինելու համար նախատեսվում է ձեռք բերել

6 հատ արագագործ լազերային տպող սարք, 3 հատ փոքր լազերային տպող սարքավորում և 1 հատ գունավոր փոքր տպող լազերային սարքավորում:

➢ **Փաստաթղթերի մշակման սարքավորումներ՝ 1,000.0 հազ ՀՀ դրամ**

ՀՀ կենտրոնական բանկում փաստաթղթաշրջանառության համակարգի համար 2018թ. նախատեսվում է ձեռք բերել 2 հատ փաստաթղթերի մշակման սարքավորում:

➢ **Բլեյդ սերվերային համալիր՝ 110,000.0 հազ ՀՀ դրամ:**

2018թ ՀՀ կենտրոնական բանկում շահագործվող բլեյդ համալիրներից ամենահինը՝ Cisco EMC-ը նախատեսվում է տեղափոխել պահուստային բանկ, իսկ վրան շահագործվող համակարգերը գործարկել նոր ձեռքբերվող բլեյդ համալիրի վրա:

- **Ցանցային սարքավորումների գծով կապիտալ ներդրումները պլանավորվել են՝ 68,021.5 հազ ՀՀ դրամ:**

➢ **Լոկալ ցանցի կոմունիկացիոն սարքավորումներ՝ 6,000.0 հազ դրամ**

2018 թվականի լոկալ ցանցի հետ կապված կապիտալ ներդրումները ունեն 1 ուղղություն՝ ՀՀ կենտրոնական բանկի լոկալ ցանցի սարքավորումների աշխատանքի անընդհատության ապահովման նպատակով որոշակի պահուստավորում:

Այդ նպատակով անհրաժեշտ է ձեռք բերել հետևյալ սարքավորումները՝ Juniper EX2300-24T 2 հատ և Juniper SRX ու EX տիպի սարքավորումների համար էլեկտրասնուցման երկրորդ սարքավորում (բլոկ) աշխատանքի անընդհատությունը ապահովելու համար:

➢ **CBANET ցանցի կոմունիկացիոն սարքավորումներ 46,021.5 հազ դրամ**

CBANET ցանցի զարգացման նպատակով 2018 թվականին անհրաժեշտ է ձեռք բերել ու գործարկել բարձր արտադրողականությամբ 3 երթուղիչ, որոնցից երկուսը Երևանի երկու կենտրոնական հանգույցներում և մեկը՝ պահուստային բանկում տեղադրելու համար:

➢ **INTERNET ցանցի կոմունիկացիոն սարքավորումներ 16,000.0 հազ դրամ**

ՀՀ կենտրոնական բանկի ինտերնետային կապի ենթակառուցվածքում կիրառվող երթուղիչները բավականին հնացել են ու չեն բավարարում ներկայիս ֆունկցիոնալ, անվտանգության ու թողունակության պահանջներին: Նրանք պետք է փոխարինվեն ավելի ժամանակակից ու արդի պահանջներին բավարարող սարքավորումներով:

2018 թվականին պլանավորվում է փոխարինել 2 երթուղիչները նոր Cisco ISR 4431 սարքավորումներով:

- **Համակարգչային ծրագրերի գծով կապիտալ ներդրումները պլանավորվել են՝ 1,240,492.0 հազ ՀՀ դրամ, որից**

  - **Ընդհանուր օգտագործման ծրագրային ապահովման ձեռքբերման համար 243,792.0 հազ ՀՀ դրամ,**

2018թ. նախատեսվում է ձեռք բերել ծրագրային փաթեթներ հետևյալ նպատակներով՝

- տվյալների հենքի կառավարման համակարգի ու միջին շերտի ծրագրային պլատֆորմների թարմացում, պահանջվող քանակի արտոնագրերի ապահովում և այդ համակարգի ադմինիստրավորման ծրագրային միջոցների կատարելագործում
- միջին շերտի ծրագրային պլատֆորմների նոր փաթեթների ձեռք բերում ու ներդրում
- ֆունկցիոնալ ստորաբաժանումների կողմից՝ դրամավարկային քաղաքականության որոշման և իրականացման ու տնտեսագիտական հետազոտությունների կատարման նպատակներով, ֆինանսական ու տնտեսգիտական վերլուծությունների իրականացման համար ստանդարտ ծրագրային փաթեթների ձեռք բերում ու ներդրում
- ծրագրատեխնիկական սպասարկման ուտիլիտների կիրառում ծրագրերի մշակման համար
- ծրագրաապարատային ենթակառուցվածքի կառավարման և մոնիտորինգի համակարգերի զարգացում
- ծրագրավորման միջոցների և ստանդարտ ծրագրերի նոր տարբերակների ձեռքբերում և արտոնագրերի ավելացում:

Ստորև բերված են ծրագրային փաթեթները ամբողջ ԿԲ-ի համար

1. տնտեսագիտական վերլուծությունների ծրագրային փաթեթներ Matlab՝ 24 արտոնագիր, EViews -8՝ 24 արտոնագիր, Stata-10՝ 12 արտոնագիր, SPSS՝ 5 concurent user, ընդամենը 87,434.0 հազ դրամ

2. Այլ ծրագրային փաթեթներ՝ Corel Drow, Adobe Photoshop, AABBY Lingvo և այլ՝ 1,944.0 հազ դրամի:

3. SS ենթակառուցվածքի կառավարման և մոնիտորինգի համակարգ՝ 4,000.0 հազ դրամ:

4. Տվյալների հենքերի կառավարման համակարգի ադմինիստրավորման ծրագրային գործիքներ՝ 2,000.0 հազ դրամ:

5. Ծրագրավորման համար անհրաժեշտ կոմպոնենտներ՝ 5,000.0 հազ դրամ:

2018թ. նախատեսվում է ՀՀ կենտրոնական բանկի SWIFT-ի տերմինալի ծրագրային ապահովումը՝ SWIFT Alliance Entry-ն փոխարինել նոր ավելի հզոր՝ SWIFT Alliance Access փաթեթով: Ծախսերը կկազմեն մոտ37,110.0 հազ դրամ:

2018թ. նախատեսվում է ձեռք բերել Microsoft-ի ՀՀ կենտրոնական բանկում շահագործվող համակարգերի լրացուցիչ արտոնագրեր, ինչի արժեքը գնահատվում է մոտ 18,644.0 հազ դրամ:

2018 թվականին սկսելու են շահագործվել կենտրոնական բանկի նոր բանկային ավտոմատացված համակարգի բաղադրամասերի կիրառական Oracle Web Logic Application 6 հատ սերվերները, որոնց ձեռք բերման ծախսերը կկազմեն մոտ 87,660.0 հազ դրամ

Ընդամենը ծախսերը կկազմեն **243,792.0 հազ ՀՀ դրամ**:

- **Կիրառական ծրագրային ապահովման համար 890,700.0 հազ ՀՀ դրամ,**

2017 թվականին սկսվել և 2018թ-ին շարունակվելու են մի քանի նախագծերի մշակման և ներդրման աշխատանքները՝

- Կանխիկի կառավարման տեղեկատվական համակարգ.
- Բանկային ավտոմատացված համակարգ և դրան համակցված՝ Ներքին հաշվապահական հաշվառման համակարգը ու Միջբանկային էլեկտրոնային վճարումների համակարգը (RTGS).
- ԴՈՒՀԿ ու ՀՀ կենտրոնական բանկի ինտերնետային կայքերի ձեռք բերում և ներդրում, «Ֆինանսական օգնական» կայքի ձեռք բերում և ներդրում.
- ՀՀ ԿԲ-ի Ֆինանսական դիտարկումների կենտրոնի Գործերի կառավարման համակարգի զարգացում:

Նախատեսվում է իրականացնել տվյալների միգրացիա Գործառնական օր համակարգից տվյալները նոր Բանկային ավտոմատացված համակարգ:

Ընդամենը ծախսերը կկազմեն **890,700.0 հազ ՀՀ դրամ**:

- **Տեղեկատվական անվտանգության ծրագրերի գծով՝ 66,000.0 հազ.ՀՀ դրամ**

Համաձայն ներդրվող PKI նախագծի նախատեսվում է ձեռքբերել երկրորդ փոխարինող HSM սարքի ծրագրային հավելվածները՝ որպես պահուստային, կլաստերում աշխատելու համար նույնականացման կառավարման համակարգի օգտագործողների քանակով

300 օգտագործողի արտոնագիր * 20.0 հազ ՀՀ դրամ = 6,000.0 հազ ՀՀ դրամ

ՀՀ ԿԲ աշխատակայանների, պահուստային բանկի, ԴՈՒՀԿ և բոլոր այլ օբյեկտների հակավիրուսային անվտանգության ապահովման համար նախատեսվում է ձեռք բերել անհրաժեշտ 200 օգտագործողի արտոնագրեր՝
200 օգտագործողի ՀՎ արտոնագիր * 25.0 հազ ՀՀ Դրամ = 5,000.0 հազ ՀՀ Դրամ

Համակարգերի ադմինիստարրոտրների գործողությունները և արտոնյալ ցանցային սեսսիաները հսկելու նպատակով պլանավորվում է ձեռք բերել ծրագրային ապահովում հետևյալ կազմով՝

- Արտոնյալ օգտագործողների գործողությունների հսկողության համակարգ՝ 200 սերվերի 30 ադմինիստարատորների համար, տաք պահուստավորմամբ՝ 35,000.0 հազ ՀՀ Դրամ

  ➢ Էլեկտրոնային փոստի միջոցով կոնֆիդենցիալ տեղեկատվության ուղարկման ընթացքում տվյալների պաշտպանվածությունը ապահովելու համար պաշտպանված էլ. փոստի ծրագրային ապահովում 500 օգտագործողի համար՝ 20,000.0 հազ ՀՀ դրամ

  **Տեխնիկական անվտանգության ծրագրային համակարգերի մասով 40,000.0հազ. ՀՀ դրամ**

Տեսահսկողության արդյունավետությունը և օգտագործողների թիվը բարձրացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել Դիլիջանում տեղակայված օբյեկտների IP տեսադիտարկման համակարգի կառավարման ծրագրային ապահովում: 1 ծրագրային փաթեթի արժեքն ՝ 40,000.0 հազ ՀՀ Դրամ

- **Տեղեկատվական անվտանգության ծրագրաապարատային համակարգերի գծով՝ 134,350.0 հազ. ՀՀ դրամ**

  ➢ Անվտանգության իրադարձությունների կառավարման համակարգի ընդունիչի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել մեկ հատ իրադարձությունների ընդունիչ՝ 12,500.0 հազ ՀՀ Դրամ:
  ➢ Կիբերսպառնալիքներից առավել վտանգավոր՝ APT տեսակի գրոհներ, որոնք իրականացվում են էլ. փոսի և համացանցի միացումը վարակելու միջոցով, չեզոքացնելու համար համար անհրաժեշտ է ներդնել համացանցում տեղեկատվական հոսքերի վերլուծության համակարգ՝ 73,500.0 հազ ՀՀ Դրամ:
  ➢ Ներկայումս ԿԲ-ում շահագործվում է գաղտնագրման բանալիների ստեղծման և պահպանման անվտանգության ծրագրա-ապարատային մոդուլ (HSM - NETWORK HARDWARE SECURITY MODULE) և դրա հիման

վրա կառուցված հավաստագրման կենտրոն: Շահագործվող համակարգի պահուստային տարբերակը (կլաստերը) կառուցելու համար անհրաժեշտ է ձեռք բերել ևս մեկ HSM սարք՝ 22,000.0 հազ ՀՀ դրամ:

- Դուրս գրվող համակարգչային տեխնիկայի, օգտագործման համար ոչ պիտանի, անսարք հիշողության սարքերի վրա գրառված տեղեկատվության ոչնչացման համար պլանավորվում է ձեռք բերել 2 հատ տեղեկատվության ոչնչացման սարք՝ 2,000.0 հազ ՀՀ դրամ
- ՀՀ Վեբ կայքերի վրա իրականացվող գրոհներից առավել վտանգավորներն են վեբ կիրառությունների խոցելիությունները շահագործողները՝ SQL injection, XSS, Illegal access և այլն: Վեբկայքերի կիրառությունների պաշտպանվածությունը ապահովելու համար պլանավորվում է ձեռք բերել1 հատ Web application firewall՝ 24,350.0 հազ ՀՀ դրամ

- **Տեխնիկական անվտանգության ծրագրային համակարգերի մասով՝ 196,350.0 հազ.**ՀՀ դրամ

  - ՀՀ ԿԲ գլխամասի տարածքի պարագիծը պլանավորվում է հագեցնել ներթափանցման հայտնաբերման և ահազանգման համակարգով: Նշված տարածքի համար անհրաժեշտ համալիրի ընդհանուր արժեքը կկազմի 50,000.0 հազ ՀՀ դրամ:
  - ՀՀ ԿԲ տարածքային մասնաշենքերում IP տեսահսկման համակարգի զարգացման համար այն անհրաժշետ է ապահովել ցանցային տեսագրիչներով՝ NVR տեսակի սարքերով: Դա թույլ կտա պահպանել և գլխամաս հաղորդել տեսապատկերը՝ 1,750.0 հազ ՀՀ Դրամ:
  - ՀՀ ԿԲ տեսահսկման և անվտանգության այլ համակարգեր տվյալների արխիվացման համար պլանավորվում է ձեռք բերել ցանցային հասանելիության հիշողության սարքեր: Համաձայն հաշվարկի բավարար ծավալը կազմում է 64 TB՝ 15,400.0 հազ ՀՀ Դրամ:
  - ՀՀ ԿԲ վարչական շենքի և ՏԴԿ-ների տեսահսկման համակարգի վերազինման նպատակով պլանավորվում ձեռք բերել և տեղադրել՝ 100 հատ տեսախցիկ (ներառյալ տեղադրման աշխատանքները) ՝ 50,000.0 հազ ՀՀ դրամ
  - ՀՀ ԿԲ մուտքերը ներխուժումից պաշտպանելու համար պլանավորվում է վերազինել անցակետերը, տեղադրելով պտույտային անցադռներ

  4 հատ անցագոտի * 19,800.0 հազ ՀՀ Դրամ = 79,200.0 հազ ՀՀ Դրամ

### *2.2 Գրասենյակային գույք, կապի միջոցներ, այլ հիմնական միջոցներ՝ 90,990.0 հազ. ՀՀ դրամ*

Կենտրոնական բանկի բնականոն գործունեությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ այլ հիմնական միջոցներ, մասնավորապես՝ կապի միջոցներ, պատճենահանող սարքեր, թուղթ ոչնչացնող սարքեր, տնտեսական գործիքներ և այլ հիմնական միջոցներ ձեռք բերելու համար 2018 թվականին նախատեսված է 90,990.0 հազ. ՀՀ դրամ:

Այս հոդվածի գծով ծախսերը 2017թ նկատմամբ ավելացել են 44 % ով:

### *2.3 Անվտանգության ապահովման համար անհրաժեշտ հիմնական միջոցներ՝ 79,664.0 հազ. ՀՀ դրամ*

ՀՀ ԿԲ տարածաշրջանային մասնաշենքերի պահպանության և հրդեհի ահազանգման համակարգերը գլխամասի կառավարման համակարգին ինտեգրելու նպատակով պլանավորվում է ձեռք բերել և տեղադրել 2 անվտանգության վահանակ-պանել՝ 1,400.0 հազ ՀՀ Դրամ:

Օբյեկտների կրիտիկայնությունը հաշվի առնելով պլանավորվում է ձեռք բերել հրդեհի վաղ հայտնաբերման համակարգ 5 սերվերային սենյակի համար՝ 12,500.0 հազ ՀՀ Դրամ

Տեսախցիկների խափանման դեպքում դրանց արագ փոխարինման համար անհրաժեշտ է ունենալ պահուստ: Պահուստային քանակ ապահովելու համար պլանավորվում է ձեռք բերել 10 հատ տեսախցիկ՝ 3,000.0 հազ ՀՀ Դրամ

IP տեսահսկման համակարգի կառավարումը, օպերատորների իրավասուների բաշխումը, արխիվացումը ապահովելու համար նախատեսվում է ձեռք բերել 2 տեսա-սերվերներ՝ 24,000.0 հազ ՀՀ Դրամ:

Հաշվի առնելով, որ ավտոմեքենաների մեծամասնությունը շահագործվում են բնական գազով Դիլիջանի բնակելի շենքերի կայանատեղիների հակահրդեհային անվտանգությունը ապահովելու համար պլանավորվում է տեղադրել փոշով հագեցված հրդեհաշիջման համակարգ 3 կայանատեղի համար՝ 15,000.0 հազ ՀՀ Դրամ:

Ծառայության ժամկետը լրանալուն պես կրակմարիչները սահմանված կարգով ենթակա են փոխարինման: 2018 թ ընթացքում ձեռք է բերվելու 40 կրակմարիչ 1,200.0 հազ ՀՀ Դրամ:

Քաղ. պաշտպանության ապահովման նկատառումներից ելնելով անհրաժեշտ է անձնակազմը ապահովել հակագազերով՝ 1000 հակագազ * 6.0 հազ ՀՀ Դրամ = 6,000.0 հազ ՀՀ Դրամ:

Կիբեռանվտանգության մակարդակը բարձրացնելու նպատակով ի լրումն գաղտնաբառի, օգտագործողներին պլանավորում է տրամադրել ՀՀ ԿԲ համակարգչային ցանց մուտք գործելու նույնականացման միջոց՝ 500 աշխատակից * 10.0 հազ ՀՀ Դրամ = 5,000.0 հազ ՀՀ Դրամ:

Լազերային, մագնիսային և հիշողության այլ կրիչների ֆիզիկապես ոչնչացման համար պլանավորվում է ձեռք բերել 2 հատուկ սարք՝ 2,000.0 հազ ՀՀ Դրամ:

Շենքը ապօրինի ներթափանցումից պաշտպանելու նպատակով պլանավորվում է պատուհաններին փակցնել ամրացման ժապավեն՝ 12 փաթեթ * 157.0 հազ ՀՀ Դրամ = 1,884.0 հազ ՀՀ Դրամ:

Դրամապահոցի անվտանգության համակարգի վերազինման համար պլանավորվել է 6,000.0 հազ ՀՀ Դրամ:

2018 թ. ավարտվում է թվով 48 սնուցման սարքերի օգտակար ծառայության ժամկետը: Հաճախակի խափանումներից և անվտանգության համակարգերի աշխատանքի անընդհատությունը ապահովելու նպատակով պլանավորվում է նշված սարքերը փոխարինել նորերով՝ 48 սնուցման սարքեր * 35.0 հազ ՀՀ Դրամ = 1,680.0 հազ ՀՀ Դրամ:

Այս հոդվածով նախատեսված գումարը 2017 թ. նկատմամբ նվազել են 18.6% ով:

### *3. Կապիտալ ներդրում այլ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում՝ 24,300,000.0 հազ. ՀՀ դրամ*

2018թ ՀՀ կենտրոնական բանկի կողմից նախատեսվում է իրականացնել **24.0 մլրդ** դրամի կապիտալ ներդրում «Ազգային հիփոթեքային ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ կապիտալում՝ պայմանավորված վերջիններիս զարգացման հնարավորությունների ավելացման անհրաժեշտությամբ: Ներդրումները պլանավորվել են Հայաստանի Հանրապետության մի շարք պետական վարկային ծրագրերի ֆինանսավորման նպատակով, մասնավորապես՝ պետական ծառայողներին մատչելի բնակարան, գիտնականներին մատչելի բնակարան, երիտասարդ ընտանիքներին մատչելի բնակարան, բնակարանների վերանորոգման ծրագիր և այլ հիփոթեկային ծրագրեր, ինչպես նաև զինծառայողների սպառողական և հիփոթեկային վարկավորման, մատչելի ուսանողական վարկավորման և վարկավորման այլ ծրագրեր:

«Հայինկասացիա» ՓԲԸ կանոնադրական կապիտալում պլանավորվում է կատարել **300 մլն** ՀՀ դրամի կապիտալ ներդրում, որը ուղղվելու է «Հայինկասացիա» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինմանը:

Այս հոդվածով նախատեսված գումարը 2017թ. համար նախատեսված գումարի նկատմամբ ավելացել է 23 % ով:

### *4. Վարչական նպատակներով իրականացվող կապիտալ ներդրումներ՝ 31,000.0 հազ. ՀՀ դրամ:*

Գումարը նախատեսվում է 1 հատ սպրինտեր ձեռքբերելու համար՝ ծառայության ժամկետը լրացած միկրոավտոբուսը նորով փոխարինելու համար: :

Այս հոդվածով նախատեսված գումարը 2017թ. համար նախատեսված գումարի նկատմամբ չի փոխվել:

### *Ընդամենը կապիտալ ներդրումների և հիմնական միջոցների ձեռքբերման ծրագիր՝ 26,789,500.0 հազ. ՀՀ դրամ:*

## ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | | 2016 թվականի կատարողական | 2017 թվականի կանխատեսվող | 2018թ կանխատեսվող | 2018թ. նախահաշվի տարբերությունը 2017թ. նախահաշվի նկատմամբ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ապարատի պահպանման ծախսեր (աշխատակիցների աշխատավարձ, պարգևատրում, ՀՀ կենսաթոշակային հիմնադրամին մուծումներ, անձնակազմի ուսուցում և վերապատրաստում, գործուղում,ներկայացուցչական ծախսեր, ծառայողական փոխադրամիջոցների շահագործման ծախսեր, ՀՀ ԿԲ աշխատակիցների սոց ապահովության այլ ծախսեր | 6,682,738.7 | 6,923,384.3 | 7,063,686.4 | 2% |
| ա) | *Աշխատավարձ և նրան հավասարեցված վճարներ* | 5,821,536.22 | 5,938,092.00 | 6,078,522.57 | 2% |
| բ) | *ՀՀ ԿԲ աշխատակիցների սոցիալական ապահովության այլ ծախսեր* | 389,692.50 | 422,500.00 | 422,500.00 | 0% |
| գ) | *Անձնակազմի գործուղում* | 350,670.06 | 434,488.03 | 434,375.50 | 0% |
| դ) | *Ներկայացուցչական ծախսեր* | 45,363.14 | 54,218.30 | 54,218.30 | 0% |
| ե) | *Ծառայողական փոխադրամիջոցների շահագործում* | 75,476.80 | 74,086.00 | 74,070.00 | 0% |
| 2 | Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսեր | 42,102.3 | 61,257.7 | 61,227.70 | 0% |
| 3 | Տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված ծախսեր | 100,465.2 | 114,452.7 | 113,848.70 | -1% |
| 4 | Ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսեր | 28,516.1 | 38,881.8 | 35,965.74 | -7% |
| 5 | Չնախատեսված ծախսեր | 4,792.7 | 20,000.0 | 20,000.00 | 0% |
| | | | - | | |
| **Ընդամենը վարչական ծախսեր** | | 6,858,614.9 | 7,157,976.5 | 7,294,728.5 | 2% |

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հազ. դրամ

| | | 2016 թվականի կատարողական | 2017 թվականի կանխատեսվող | 2018թ կանխատեսվող | 2018թ. նախահաշվի տարբերություն ը 2017թ. նախահաշվի |
|---|---|---|---|---|---|
| 1 | **Բանկի հիմնական գործունեության ապահովման նպատակով իրականացվող կապիտալ ներդրումներ** | **32,089,857.3** | **24,101,482.4** | **26,758,500.0** | 11% |
| 1.1 | Աշխատանքային շենքերի և շինությունների կառուցում, ձեռքբերում և կապիտալ վերանորոգում | 1,596,195.87 | 2,146,000.00 | 300,000.00 | -86% |
| 1.2 | Համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, կապի միջոցների և բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցների ձեռքբերում և կապիտալ վերանորոգում | 1,504,391.43 | 2,155,482.40 | 2,158,500.00 | 0% |
| 1.3 | Կենտրոնական բանկի խնդիրների հետ ուղղակիորեն առնչվող իրավաբանական անձանց կապիտալում ներդրումներ | 28,989,270.00 | 19,800,000.00 | 24,300,000.00 | 23% |
| 2 | **Վարչական նպատակներով իրականացվող կապիտալ ներդրումներ** | **56,017.9** | **31,000.0** | **31,000.0** | 0% |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Ընդամենը կապիտալ ներդրումներ և հիմնական միջոցների ձեռքբերման ծրագիր՝** | **32,145,875.2** | **24,132,482.4** | **26,789,500.0** | 11% |